ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՄՄԱՎԵՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
ԼԵՌՆԱՄԵՐՁ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИЙ РЕГИОН
СЕЛЬСКАЯ ОБЩИНА ЛЕРНАМЕРЦ

N 45
«22» ՆՈՅԵՄԲԵՐԻՆ 2012թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ՝ ՊԱՐՈՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կից ներկայացնում ենք Լեռնամերձի գյուղական համայնքի ավագանու 2012 թվ. թվի նոյեմբերի 22-ի թիվ 6 արտահերթ նիստի ընդունած որոշումները

Աղթիր 21 էջ

Համայնքի ղեկավար՝ Ա. Միրզոյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
Մուտք թիվ 10939-Ա
26 — 11 — 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11-Ա

ԹԻՎ 11-Ա

«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012թ

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 6 նիստի օրակարգի հանձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԿՈՂՄ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ռ. Ավդալյան
Մ. Նիկողոսյան
Վ. Ներսիսյան
Գ. Մաղսոյան
Հ. Արաստանյան

Համայնքի ղեկավար՝ Ա. Միրզոյան

Կ. Տ.

2012թվականի նոյեմբերի «22»
Լեռնամերձ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՄ 2012 թվականի նոյեմբերի 22-ի
ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ N 9-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012-2016 ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

/ՁԵԿՈՒՑՈՂ՝ Վ. ՄԻՐԶՈՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Ա

«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012թ Թիվ 12-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի առաջի մասի 26-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և աշխատավարձի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԿՈՂՄ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ռ. Ավդալյան
Մ. Նիկողոսյան
Վ. Ներսիսյան
Գ. Մաղսոյան
Հ. Արասխանյան

Համայնքի ղեկավար՝ Կ. Հարությունյան

Կ. Տ.

2012 թվականի նոյեմբերի «22»
գ. Լեռնամերձ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13-Ն

«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012թ Թիվ 13-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի տասնութերորդ մասով և Հայաստանի Հանրապետության «Տեղական տուրքերի մասին» օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձի գյուղական համայնքի 2013 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատել՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԿՈՂՄ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ռ. Ավդալյան
Մ. Նիկողոսյան
Վ. Ներսիսյան
Գ. Մաղսոյան
Ի. Գրիգորյան

Համայնքի ղեկավար Վ. Միրզոյան

2012 թվականի նեյեմբերի «22»
գ. Լեռնամերձ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14-Ն

«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012թ. Թիվ 14-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2012-2016 ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի երկրորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձի գյուղական համայնքի 2012-2016 թթ. զարգացման քառամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԿՈՂՄ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ռ. Ավդալյան
Մ. Նիկողոսյան
Վ. Ներսիսյան
Գ. Մաղսոյան
Արասխանյան

Համայնքի ղեկավար՝ Վ. Միրզոյան

2012 թվականի նոյեմբերի «22»
գ. Լեռնամերձ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂՆԱՄԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՍՍՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի
ԹԻՎ [illegible] ՈՐՈՇՄԱՆ

2013 ԹՎԱԿԱՆԻ ԼԵՌՆԱՄԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍՍՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1 Աշխատակիցների թվաքանակը՝ 7

2 Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքաչափը /դրամ/
1	Համայնքի ղեկավար	1	120000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	98000
3	Աշխատակազմի քարտուղար	1	98000
4	Առաջատար մասնագետ	1	96000
5	1-ին կարգի մասնագետ	1	65000
6	Հավաքարար	1	47000
7	Դոնապան	1	47000
	Ընդամենը	7	571000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է

հիմնական օբյեկտների համար

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի տներ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ,

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 դրամ

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 դրամ,

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 35000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 դրամ

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն 1500 դրամ

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների վերնակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) ու տանքի օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափերից կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված դրույքաչափերը

ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխման դեպքում

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության, ապա, սույն օրենքի իմաստով այն հանդիսանում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քարտաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2560 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը և վճարները սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ:

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ:

3) այլ ապրանքների (այդ թվում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի) վաճառքի համար յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 դրամ.

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղասենյակները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ:

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ:

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 250000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ:

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ:

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ.

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար ալկոհոլային գրվածքի առևտրի թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրող գովազդող արտաքին գովազդի համար 1000 դրամ.

2) բոլոր ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար 1000 դրամ

4) դատարան գովազդային վահանակների համար 700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5000 դրամ:

10. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքի փոփոխման, վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմանների նշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 5000 դրամ.

11. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 1000 դրամ.

12. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանվում է՝ 5000 դրամ:

13. համայնքում աղբահանություն կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանվում է 500 դրամ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ
«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ

ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՎԱՐԴԱՆ ՍԻՐԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ N 14-Ն ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012-2016 ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

2012 թ.

Ի Ն Չ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում է համայնքի ավագանու կողմից,և դրվում է գործողության մեջ;Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն,որը նախատեսվում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը;

1 ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 900մ բարձրության վրա; Լեռնամերձ գյուղը գտնվում է Ամբերդ գետի ափին; Գյուղը սահմանակից է Արագածոտնի մարզի Ոսկեհատ գյուղի և 5-րդ սովխոզի հետ; Գյուղի ծայրամասում է վերջանում Աշտարակի ձորը; Արմավիրի մարզից գյուղը սահմանակից է Ամբերդ և Աղավնատուն գյուղերի հետ;

Ժ Ո Ղ Ո Վ Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գյուղում ապրում են 515 բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության՝ 56 տոկոսը;Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. Երեխաներ 0-6տ 25
2. Դպրոցական 7-17տ 53
3. 18-62 տարեկան 295

4. Թոշակառուներ 43
5. Հաշմանդամներ 3
6. Աշխատունակներ 301

Գյուղն ունի 127 տնտնություն;

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից,որոնք ընտրվում են չորս տարին մեկ անգամ; Գյուղապետը ստեղծել է աշխատակազմի հետևյալ կառուցվածքով՝

1.Գյուղապետ 1 դրույք

2.Տեղակալ 1 դրույք

3.Աշխատակազմի քարտուղար 1 դրույք

4.Առաջատար մասնագետ 1 դրույք

5. 1-ին կարգի մասնագետ 1 դրույք

6. Հավաքարար 1 դրույք

7. Պահակ 1դրույք

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 7 անձից;

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ.-ի թիվ 51որոշմամբ հետևյալ կազմով հավելված՝

1.Խմելու ջրի ներտնտեսային համակարգ

2.Ներտնտեսային ոռոգման ջրի համակարգ

3.Ներտնտեսային փողոցներ և ճանապարհներ

4.Հուշարձան

5.Գերեզմանատուն

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի:Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1968թ.-ին,որի մաշվածությունն այնքան մեծ է ,որ ջրի կորուստը հասնում է 60-80 տոկոսի;Անձրևաջրերն ու կեղտաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որը վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը;

Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի; Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 1 կմ ճանապարհ և փողոցներ;

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունը կատարվում է գյուղապետարանի միջոցով 100-տոկոսով;Չկան խողովակներ ու կիսախողովակներ խմելու ջրի և ոռոգման ներքին ցանցերի վերանորոգման համար;Խմելու ջրի մատակարարումը հաճախ կատարվում է ընդհատումներով՝ ջրամատակարարման ցանցի մաշվածության պատճառով;

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 101 առանձնատուն,15400 հազ.քմ. տարածքով;Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը 41-ից ավելի է,որը տարեցտարի աճում է;Կան բազմաթիվ կիսակառույց շենքեր, որոնք միջոցների սղության պատճառով չեն կառուցվում;

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

1.Համայնքի վարչական տարածք	167.3հա
Որից՝	
Ա.Վարելահողեր	73հա
Բ.Ջրային	1.7հա
Գ.Անօգտագործելի հողեր	59.2հա
Դ.Դաշտային ճանապարհներ	5հա
Ե.Գերեզմանոց	1հա
Զ.Տնամերձ հողեր	34հա
Է.Դպրոց	0.7հա
Ը.Հուշարձան	0.1հա
Թ.Գյուղամիջյան փողոցներ	1.7հա
Ժ.Սեփականաշնորհված հողեր	85հա
Որտեղ՝	
Մեկ հողաբաժնի չափը	0.36հա

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքում անասունների քանակը կազմում է հետևյալ խմբաքանակով.

1.Խոշոր եղջերավորներ	156գլուխ
2.Խոզեր	3 գլուխ
3.Ոչխարներ	288 գլուխ
4.Հավեր	676

Համայնքի տարածքում կան 55 հեկտարից ավելի անմշակ հողեր,որի մի մասում նույնիսկ խոտ չի աճում, հետևաբար չկան արոտավայրեր,որպիսիզի զարգանա խոշոր եղջերավոր անասնապահությունը;Այս պայմաններում հարկավոր է պահել միայն քիչ քանակությամբ կթու կովեր բարձր կաթնատու սորտերի;Մսուրային պայմաններում կարելի է զարգացնել խոզաբուծությունը և թռչնաբուծությունը;Հարկավոր է խոզերի և հավերի ցեղական սորտեր ներմուծել համայնք և բազմացնել ուտարածել համայնքուն;

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի 1 տարրական դպրոց, որը գտնվում է անմխիթար վիճակում; Դպրոցում սովորում է 43 աշակերտ; Դպրոցն ունի 19 աշխատատեղ,1 ուսուցչին ընկնում է 2 աշակերտ;

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1.Խմելու ջրի և ոռոգման ջրի ցանցերի անմխիթար վիճակը

2.Ծնելիության նվազում՝ կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ

3.Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը

4.Գործազրկություն

5.Հողերի անբերության պատճառով գյուղացու եկամուտների նվազում;

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մեծ աշխատուժի առկայություն
- Բարձրացնել հողերի բերրիությունը գոմաղբով և այլ լցոնումներով

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի վերանորոգման անհրաժեշտությունը (կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի ցանց կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների աղբյուր)
- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը
- Հողերի բերրիության անհապաղ բարձրացում առանց որի անհնարին կլինի համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը
- Հանդամիջյան ճանապարհների վերանորոգում, որը կնպաստի էլ ավելի լավ կատարել գյուղ մթերքների տեղափոխումը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր:

Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում,
- Համայնքն ապահովել շուրջօրյա, անհրաժեշտ որակի խմելու ջրով,
- Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին:
- Համայնքը ապահովել անհրաժեշտ քանակության ոռոգման ջրով:

3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1

ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի հիմնական նպատակ այն է, որ համայնքի 50 հա հողակտորները ոռոգվեն:

ԾՐԱԳԻՐ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներհամայնքային փողոցների ճանապարհների երկարությունը կազմում է 15 կմ-ից ավելի, որից 3կմ-ը կենտրոնական ճանապարհն է: Մայրուղուց մինչև գյուղ մտնող ճանապարհն ասֆալտապատ է և բարեկարգ վիճակում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է՝

- ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ տարվա բոլոր եղանակներին,
- վերացնել փողոցների ջրափոսերը:

ԾՐԱԳԻՐ 3

ՀՈՂԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Հարկավոր է միջոցներ ձեռք առնել որպիսզի գյուղացին կարողանա հողին տալ համապատասխան սնուցում: Հողերին սնուցում տալու համար հարկավոր են հետևյալ նյութերը.

1. կենսահումուս
2. ազոտական սիլիտրա
3. կալիումական աղ
4. սուպեր ֆոսֆատ

Բացի այդ ճիշտ չի կազմակերպվում պայքարը միջատների, կրծողների և մոլախոտերի դեմ: Հարկավոր են համատարած միջոցառումներ կազմակերպել.

1. մկների
2. միջատների
3. առջուկների
4. և մի շարք այլ միջատների դեմ

Մոլախոտերի դեմ կան մի շարք ժամանակակից քիմիկատներ որոնց օգտագործման պայմաններում կարելի է վերացնել մոլախոտերը: Միջոցառումները ճիշտ կազմակերպելու դեպքում համայնքում կզարգանա գյուղատնտեսությունը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Բարձրացնել գյուղ. նշանակության հողերի բերքատվությունը, ավելացնել գյուղմթերքների արտադրությունը, մասնավորապես խաղողի, լոլիկի, առվույտի և ցորենի:
- Փնտրել և գտնել այնպիսի կազմակերպություններ որոնց միջոցով կարելի է ճարել էժան պարարտանյութեր:Մասնավորապես կենսահումուս, կայլում, սուպեր ֆոսֆատ և ազոտական պարարտանյութեր:
- Վերահսկողություն սահմանել համայնք ներմուծվող թունաքիմիկատների գնի և որակի վրա:
- Մասնագետների միջոցով անցկացնել սեմինարներ գյուղատնտեսության և անասնապահության զարգացման վերաբերյալ:
- Զարգացնել անասունների սոյաբուծությունը համայնքում:
- Համայնքը դարձնել ժամանակի հետ քայլող գյուղատնտեսական և անասնապահական զարգացած կենտրոն:

ԾՐԱԳՐԻՑ ԱՊԱՀՈՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Իրականացնելով այս ծրագիրը համայնքում էլ ավելի կզարգանա գյուղատնտեսությունը և անասնապահությունը:
- Կավելանա գյուղմթերքի արտադրությունը և որակը
- Անասունների որակը բարձրացնելով կբարձրանա կաթնատվությունը, մսատվությունը և ձվատվությունը:

Ծ Ր Ա Գ Ի Ր 4

ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կոմունիստական հասարակության ժամանակ համայնքը ամբողջովին ուներ գիշերային լուսավորություն, այժմ այն ամբողջովին քայքայված է, և համայնքը զրկված է գիշերային լուսավորությունից:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Վերջին տարիներին համայնքը ընդհանրապես չունի գիշերային լուսավորություն:Համայնքում գիշերային լուսավորության բացակայության և ճանապարհների վատ լինելու պատճառով գիշերը բնակիչների շարժը դառնում է ավելի դժվար:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական խնդիրներն են

- Ապահովել համայնքի գիշերային լուսավորությունը:
- Կազմել ծրագրի հիմնական նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը համայնքը կունենա գիշերային լուսավորություն , որանով կապահովվի բնակիչների գիշերային անցուդարձը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը 127
   այդ թվում՝
   ա. անհատական տնտեսություն-127
   բ. կոլեկտիվ տնտեսություն -
   գ. պետական տնտեսություն-

2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը. ց
   ա. ցորեն
   գ. կարտոֆիլ
   դ. կաղամբ
   ե. բանջարաբույս կուլտ.
   զ. կաթ
   է. միս
   ը. բուրդ
3. Ցանքատարածություններ
   ա. հացահատիկ
   բ. կարտոֆիլ
   գ. բանջարաբույս կուլտ.
   դ. կաղամբ
   ե. առվույտ
4. Անասնագլխաքանակը, հատ
   ա. խոշոր եղջեր. անասուններ
      այդ թվում՝ կովեր
   բ. մանր եղջեր. անասուններ
      այդ թվում՝ մայրեր
   գ. խոզեր
      այդ թվում՝ մայրեր
   դ. թռչուններ՝
      այդ թվում հավեր՝

ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1. Խմելու ջրի ներտնտեսային համակարգ
2. Ներտնտեսային ոռոգման ջրի համակարգ
3. Ներտնտեսային փողոցներ և ճանապարհներ
4. Հուշարձան
5. Գերեզմանատուն